ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 մայիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

70
(2920)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐՏՈՆՅԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ «ԵՐԵՄՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍԻՆ»

Երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանում ներկա է գտնվել «Երեմյան Փրոջեքթս» ընկերության կաթնամթերքի արտադրության ժամանակակից գործարանի բացմանը:

Վարչապետը «Երեմյան Փրոջեքթս» ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանի, Երեւանի քաղաքապետի ուղեկցությամբ շրջել է գործարանում, ծանոթացել ստեղծված պայմաններին եւ արտադրական հզորություններին:

Իհարկե, իշխանական բարեհաճությունը Երեմյանների նկատմամբ նոր չէ: Հայաստանից որեւէ պատվիրակություն չի հեռանում առանց Երեմյաններին պատկանող ռեստորաններում ճաշելու:

«Հայր եւ որդի Երեմյաններ» ընկերության հետ 5 տարում մինչեւ 5 մլն արժողությամբ 200-ից ավելի պայմանագրեր են կնքվել. սա վկայում է պետական գնումների կայքի արձանագրությունները:

16 ռեստորան ունեցող «Երեմյան փրոջեքթս» ընկերության հիմնադիրը եւ տնօրենը Դավիթ Երեմյանն է, ով շատ ջերմ հարաբերությունների մեջ է իշխանությունների հետ եւ պահը բաց չի թողնում պետությունից ֆինանսավորվելու:

Հավելենք, որ երբեմնի փառասեր Երեմյանները, 2023 թվականի սեպտեմբերին կայացած Երեւանի ավագանու ընտրություններին, ստիպողաբար իրենց աշխատողներին «դարձրել» էին վարչական լծակի մի մաս՝նրանց բերելով իշխող խմբակցության քարոզարշավի հանրահավաքին: Ավելին՝ՔՊ նախընտրական քարոզարշավի մեկնարկին նախորդած երեկույթի ընթացքում 2.5 մլն դրամ փոխանցած 140 նվիրատուներից առնվազն 8-ը աշխատում են «Երեմյան փրոջեքթսում»: «Երեմյան փրոջեքթսի»՝ՔՊ-ին նվիրատվություն անելու շուրջ միավորված անձանց մեծ մասը, ի դեպ, զբաղեցնում են ընկերության ղեկավար պաշտոններ, սակայն երբ լրագրողները նրանց դիմել են, «անտեղյակ» են եղել, որ իրենց անունով կատարվել են գործարքներ: Ահա, հենց սա է «պոզով պոչով կոռուպցիան»:

Ի դեպ, երեկ մեկնարկած՝«Երեմյան փրոջեքթսի» գործարանի կառուցման աշխատանքները իրականացվել են ՀՀ կառավարության, Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) եւ «Երեմյան ֆարմի» միջեւ համագործակցության հուշագրի ստորագրմամբ՝ներդրումային խոշոր նախագծի շրջանակում: Հավելենք, որ «Երեմյան փրոջեքթսը» 2018 թվականին կրկին Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) կողմից ֆինանսավորվելով 25 մլն դոլարով՝Տաշիր համայնքում անասնաբուծական նոր համալիր է կառուցել:

Հետաքրքիրն այն է, որ գրեթե ոչ մի մասնավոր ընկերություն, որքան էլ կարեւոր լինի ՀՀ տնտեսության համար, նման մեծ քանակի աջակցություն չի ստացել պետությունից:

Ինչպես արդեն հայտնի է, կիրակի օրը «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը մեծ հանրահավաք է հրավիրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շարժման առաջնորդներն արդեն տեւական ժամանակ է՝ պատրաստվում են հանրահավաքին: Շարժմանը աջակցություն հայտնած խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերի մեջ կա կոնսենսուս՝ պետք է ուժերը համատեղել, որպեսզի հանրահավաքն իսկապես աննախադեպ եւ հուժկու լինի: Քաղաքական դաշտը համախմբվել է «կոնսոլիդացիա -1» սկզբունքով: Այդ օրը հանրահավաքի հարթակից հայտարարվելու է նաեւ ժամանակավոր կառավարության վարչապետի թեկնածուի անունը. ինչպես օրեր առաջ քաղաքական տարբեր ուժերի հետ կայացած հանդիպման ժամանակ համաձայնություն էր ձեռք բերվել՝ թեկնածուն Բագրատ Սրբազանն է: Անկախ նրանից՝ անգամ Ամենայն հայոց Կաթողիկոսը կօրհնի նրա թեկնածությունը, թե ոչ, միեւնույնն է, կոնսոլիդացիան սրբազանի շուրջ է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր շարժումը մտադիր է այդ օրը հայտարարել նաեւ փողոցային պայքարի վերսկսման, նոն-ստոպ արվող գործողությունների մասին:

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը մայիսի 21-ին երկրի թիվ 1 ամբիոնից հայտարարություն-սպառնալիք հնչեցրեց. «Եկել է ժամանակը, որ քննարկենք ու հասկանանք, թե այն հարկային պարտավորությունները, որ բոլորի համար առկա են, եկեղեցու հանդեպ ինչո՞ւ չեն կիրառվում»: Ես ուզում եմ հասկանալ՝ինչու իրենք պիտի հարկ չվճարեն, ու օրենսդրական առումով պետք է վերանայենք, թե եկեղեցականը, ում թաթիկը համբուրում են, ինչո՞վ է բարձր գործարարից, ով հարկ է վճարում»: «Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկի ուսումնասիրությունից ուշագրավ փաստեր ի հայտ բերեց: Հայ առաքելական եկեղեցին՝որպես կրոնական կազմակերպություն, վճարում է հարկեր: Եվ այսպես՝ պատերազմի եւ քովիդի դաժան տարվա ընթացքում Եկեղեցին վճարել է 378 մլն դրամ հարկ: 2021 թվականին՝403 մլն դրամ, 2022 թվականին՝450 մլն դրամ, 2023 թվականին՝435 մլն դրամ: Այս տարին դեռ չի ավարտվել. միայն կան 2024-ի 1-ին եռամսյակի տվյալները: Այս տարվա 3 ամիսների ընթացքում Հայ առաքելական եկեղեցին 147 մլն դրամ հարկ է վճարել. սա նշանակում է, որ Ալեն Սիմոնյանը ստում է:

2018 թվականի «հեղափոխության» ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր՝ «Հայաստանում վարչապետի «քիփ», «վարչապետի մոտիկ», բաջանաղ, «վարչապետենց քույչի լավ տղա», սենց բաներ չեն լինելու, արագ տեմպերով միլիոնատեր դարձող «ախպեր» չի լինելու»: Իշխանության գալուց կարճ ժամանակ անց, սակայն, Փաշինյանի եւ իր թիմակիցների աներձագները, քավորներն ու սանիկները, ընկերները, ինչպես նաեւ «մորաքրոջ հարսները» տարբեր պաշտոնների նշանակվեցին: Նրանցից մեկն էլ Շիրակի մարզը ներկայացնող ՔՊ-ական պատգամավոր Էմմա Պալյանն է, որը ամուսնուն նշանակել է իրեն հասարակական հիմունքներով օգնական, իսկ եղբորը՝իր նախկին ղեկավար Կարեն Սարուխանյանի օգնական: Էմմա Պալյանի եղբայրը ներկայացրել է 2023 թվականի գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագիր, ինչից էլ հասկանում ենք, որ ԱԺ-ից տարեկան 3 մլն 504 հազար դրամ աշխատավարձից կուտակված եկամուտ ունեցող Հայկ Պալյանը 2023 թվականին ձեռք է բերել 25 մլն դրամ արժողությամբ բնակարան: Բնակարանը, որը միանձնյա սեփականությամբ է ձեռք բերվել, գտնվում է Շիրակի մարզի Գյումրի համայնքում: 2022 թվականին Հայկ Պալյանը ձեռք է բերել մեքենա՝2012 թվականի արտադրության Ford մակնիշի: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 2,5 մլն դրամ: Պալյանի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 25 մլն դրամ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՈՒՅՍ Է ԱՐԹՆԱՑԵԼ

«ԿՊԱՅՔԱՐԵՆՔ՝ ՄԻՆՉԵՎ ՀԱՋՈՂԵՆՔ»

Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը հանդիպել էր հայրենադարձների հետ: Քաղաքացիները Իրանից հատուկ եկել են Հայաստան, որպեսզի մասնակցեն Բագրատ Սրբազանի հետ հանդիպմանը:

ArmLur.am-ը զրուցել է ռուսաստանաբնակ գործարար Ներսես Ներսեսյանի հետ:

-Եկել եմ՝ միանամ Սրբազան պայքարին, կարծում եմ, որ շատ կարեւոր է այս փուլում համախմբվել եւ կանգնեցնել այս կործանարար ընթացքը: Հույս է արթնացել ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Ռուսաստանի հայերի շրջանում, որովհետեւ թե՛ Սրբազանի կենսագրությունը, թե՛ նաեւ պայքարի տրամաբանությունը եւ համախմբումը, որն այսօր կա, արթնացնում են լավատեսության հույսը: Բոլորս էլ պարտավոր ենք գալ, համախմբվել Սրբազան պայքարի շուրջ ու փորձել կասեցնել այս ամոթահար ընթացքը. շատ ճիշտ խնդիր է դրված, սա քաղաքական հարց չէ, տնտեսական չէ, այլ ազգային ազատագրական պայքար է, եւ ունենք առաջնորդ այս պայքարում ու հույս ունենք, որ կհաջողենք: Տարիների այն սուտն ու կեղծիքը, որով մարդկանց փորձել են մոլորեցնել, խաբկանքի միջոցով ձեւավորել հայի մի նոր տեսակ՝ անդեմ, անհոգի, այս տեսակին պետք է ազատագրել: Նրանք մեղավոր չեն, նրանց խաբել են: Եկել է պահը՝ լույսը բերելու, որովհետեւ չկա մթություն, կա լույսի բացակայություն: Սրբազան պայքարն այդ լույսն է. կհաջողվի՝ մենք ավելի շուտ կկասեցնենք այս ընթացքը կանխել, չի հաջողվի կպայքարենք մինչեւ հաջողենք:

-Իսկ ի՞նչ կասեք այն մասին, որ իշխանականները պնդում են, որ սա հոգեւոր շարժում չէ, ինչի՞ համար են արվում նման հայտարարությունները, քանի որ նաեւ պնդում են, որ երբ Բագրատ Սրբազանը լինում է Սուրբ Աննա եկեղեցում օրը ամփոփելիս, նրանք վախենում են Ս. Աննա եկեղեցի գնալուց, քանի որ կարծում են, որ իրենց կասեն՝ իրենք Սրբազանի շարժումից են:

-Ճիշտ են այն իմաստով, որ սա հոգեւոր շարժում չէ, սա, ինչպես ասացի, ազգային ազատագրական պայքար է, երկրորդը՝ ինչ վերաբերում է հոգեւորականին եւ հոգեւորությանը. ինչու՞ աղանդավորները կարող են լինել վարչապետներ ու նախարարներ, իսկ մեր եկեղեցին, որը մեր ինքնության ու գոյության միակ հենասյունն է եղել հարյուրավոր տարիներ, չի կարող. կարո՞ղ է: Իսկ ինչ վերաբերում է Սուրբ Աննա եկեղեցունմ այսօր մենք հավաքվում են այդ եկեղեցում, վաղը կարող ենք հավաքվել էջմիածնում, հաջորդ օրը հրապարակում. ամբողջ Հայաստանն է սրբազան հող, եւ մենք ամենուր ենք, իրենք, այո՛, պետք է վախենան, ոչ միայն վախենան, արդեն իսկ պետք է իրենց հաշիվ տված լինեն, որ սա իրենց փրկության հույսն է, որովհետեւ Աստված մի արասցե, այս պայքարի ձախողումը մարդկանց մեջ կսպանի հույսը, ինչը կտանի նոր բռնությունների:

Սա նաւի այն հնարավորությունն է, որ իրենց կտա «համաներման» իրավունք: Պայքարում այնպիսի մարդիկ են իրար հետ այսօր, որ իրար անգամ չէին «բարեւի», բայց այսօր մի գաղափարի շուրջ բռունցք ենք դարձել: Թող խելքի գան, թող միանան: Ինչ վերաբերվում է նրանց, որոնք չեն կարող միանալ, քանի որ կեղտի մեջ այն աստիճան են թաթախված, որ ցանկության դեպքում անգամ չեն կարողանա, քանզի գերի ենդարձել, իրենք կարող են ուղղակի հանձնվել, փախչել, դասալքվել իրենց ծառայությունից, քանի որ դա դարձյալ փրկություն է:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Նիկոլ Փաշինյանը երեկ ուշ երեկոյան իր ուղերձում խոսեց սահմանազատման գործընթացի, իրական եւ պատմական Հայաստանի, ամեն ինչի մասին՝ բացի կարեւորից, որին իրականում պատրաստվել էր: Նա, ըստ լուրերի, պատրաստվել էր խոսել սահմանազատմանը խոչընդոտող ուժերի դեմ կոշտ դիմադրության՝ ընդհուպ մինչեւ արտակարգ դրություն հայտարարելու:

Բայց ամեն ինչի մասին՝ հերթով: Դիտարկելով Նիկոլ Փաշինյանի՝ քիչ առաջ նախանշած թեզերը՝ կարող ենք արձանագրել, որ նա արտաքին աշխարհին մի հստակ ուղերձ տվեց, այն է՝ կիրակի օրը սպասվող հանրահավաքին որքան էլ շատ մարդ հավաքվի, միեւնույնն է՝ իր իշխանությունն ամեն գնով ավարտին է հասցնելու սահմանազատման սկսած գործընթացը:

Փաշինյանի ուղերձը հետեւյալն էր՝ցանկացած ճանապարհով, որքան էլ այն դժվար ու փշոտ լինի, սահմանազատումն արվելու է:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝Նիկոլ Փաշինյանը նախապես մտադիր է եղել իր ուղերձի մեծ մասը «նվիրել» Բագրատ Սրբազանին ու նրա առաջնորդած շարժմանը, սակայն վերջին պահին փոշմանել է ու հանել այդ հատվածը ուղերձից:

Նաեւ լուրեր կան, որ Նիկոլ Փաշինյանը մտադիր է եղել ասել, որ սահմանազատման խոչընդոտելը պետականության դեմ ոտնձգություն է, եւ կիրակի օրվա մեծ հանրահավաքը, անգամ արտակարգ դրություն մտցնելու գնով, պետք է ցրել: Նույն կառավարական աղբյուրները փոխանցում են, որ նա խորհրդակցել է նաեւ ուժային կառույցների ղեկավարների հետ, որպեսզի նրանք իր եթերից չիմանան, որ ցանկանում է արտակարգ դրություն մտցնելու ճանապարհով գնալ, սակայն ուժայիններից հորդորել են հետ կանգնել արտակարգ դրություն մտցնելու գաղափարից, քանի որ շատ բարդ է լինելու ու չեն կարողանալու այդ ծանր բեռի տակից դուրս գալ:

Ահա այս պատճառով էլ Նիկոլ Փաշինյանի երեկվա ուղերձը, հակառակ սպասումների, շատ անբովանդակ ստացվեց, քանի որ նախապես այլ տեքստ էր պատրաստել, բայց լրիվ այլ խմբագրմամբ բան կարդաց:

Հ. Գ. Ի դեպ, երեկ «Վերջին զանգ»-ն էր, բայց վարչապետի գլխիվայր շուռ եկած ուղերձում չկար շնորհավորանք նաև «հպարտ ֆաղաքացիների» սերունդներին:

ԿԱՆՉԵԼ ԵՆ՝ ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼՈՒ

Հայաստանում Ռուսաստանի դեսպան Սերգեյ Կոպիրկինը խորհրդակցությունների է կանչվել Մոսկվա:

«Մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինը խորհրդակցությունների է կանչվել Մոսկվա», - ասվում է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի մեկնաբանության մեջ:

Այլ մանրամասներ ՌԴ ԱԳՆ-ն չի հայտնում:

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐ ԵՆ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ

Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն է տարածել, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Սույն թվականի մայիսի 24-ից Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը պաշտոնապես ստանձնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի 1,9 կմ, Ոսկեպար եւ Բաղանիս բնակավայրերի 4,9 կմ հատվածների պահպանությունը:

Պետական սահմանի Կիրանց բնակավայրի 5,8 կմ հատվածի պահպանությունը, մինչեւ 2024 թվականի հուլիսի 24-ը, կիրականացվի անցումային սխեմայով:

Միեւնույն տրամաբանությամբ, Ադրբեջանի Հանրապետության կողմից սահմանային հանդիպակաց հատվածների պահպանությունը սույն թվականի մայիսի 24-ից իրականացվելու է Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայության ստորաբաժանումների կողմից»:

Հիշեցնենք, որ ապրիլի 4-ին հայտնի դարձավ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման եւ սահմանազատման վերաբերյալ փաստաթուղթ է ստորագրվել, որից հետո Տավուշում սկսեցին բողոքի գործողություններ: Մայիսի 4-ին տեղում ձեւավորված «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որը առաջնորդում են Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը եւ քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը, քայլերթով շարժվեց դեպի Երեւան: Մայիսի 26-ին նախատեսվում է շարժման մեծ հանրահավաք Հանրապետության հրապարակում:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ ԱՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Նիկոլ Փաշինյանը Աշխաբադ չի մեկնել եւ չի մասնակցի ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին:

Հայաստանի կողմից հանդիպմանը մասնակցել է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական եւ այլ մարմիններում հանրապետության մշտական լիազոր ներկայացուցիչ, Բելառուսում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռազմիկ Խումարյանը:

ՏԱՍՍ լրատվական գործակալության հաղորդմամբ՝ Հայաստանը վերջերս բացակայում է որոշ ինտեգրացիոն ձեւաչափերի հանդիպումներից:

Փաշինյանը ներկա չի եղել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության որոշ գագաթնաժողովներին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ԲԼԻՆՔԵՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի «Ժողովրդի ուժը» կուսակցության պատգամավոր Դմիտրի Խունդաձեն հայտարարել է, որ եթե Վրաստանը պետք է ընտրություն կատարի հայրենիքի ինքնիշխանության ամրապնդման եւ ամերիկյան այցագրերի ու ավիատոմսերի միջեւ, ապա երկրի իշխանություններն ընտրությունը կկատարեն հօգուտ հայրենիքի:

Այս մասին հայտնում է Sputnik գործակալության վրացական ծառայությունը:

«Պատգամավորները եւ նրանց ընտանիքների անդամները պետք է պատժվեն իրենց հայրենիքը սիրելու եւ Վրաստանի ինքնիշխանությունն ամրապնդելու համար: Ես չեմ սպասում, որ նման խիստ որոշում կկայացվի, բայց եթե, այնուամենայնիվ, ընտրությունը լինի հայրենիքի ինքնիշխանության ամրապնդման եւ ավիատոմսերի ու այցագրերի միջեւ, ապա, վստահաբար, ընտրությունը կարվի հօգուտ հայրենիքի», - հայտարարել է Խունդաձեն:

Խունդաձեի կարծիքով, երբ արեւմտյան օրենսդրությունը շատ պահանջված է Արեւմուտքում եւ արդեն կան մի շարք երկրներ, որոնք նման օրենքներ են ընդունում իրենց ինքնիշխանությունը պաշտպանելու համար, իսկ Վրաստանում նմանատիպ օրենքը համարում են ռուսական, դա «երկակի ստանդարտ է»:

«Վրաստանում յուրաքանչյուրն իրավունք ունի եւ, առավել եւս, պարտավորություն՝ պաշտպանելու իր երկրի ինքնիշխանությունը: Մայիսի 28-ին Վրաստանի խորհրդարանը կհանի վրացական օրենքի վրա դրված ոչ վրացական վետոն, եւ օրենքն ուժի մեջ կմտնի»,- ընդգծել է Խունդաձեն:

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարել էր Վրաստանի համար վիզային սահմանափակումներ մտցնելու քաղաքականության եւ ԱՄՆ-Վրաստան համագործակցության վերանայման մասին՝ ի պատասխան «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունման:

ԿՔՆՆԱՐԿԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Եվրամիության 27 երկրների արտգործնախարարները երկուշաբթի օրը նախատեսված հանդիպմանը կքննարկեն Վրաստանում ստեղծված իրավիճակն՝ օտարերկրյա գործակալների մասին օրենքի շուրջ: Այս մասին Բրյուսելում կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է ԵՄ արտաքին ծառայության ներկայացուցիչ Փիթեր Ստանոն:

«Մայիսի 27-ին Վրաստանը քննարկվելու է արտգործնախարարների կողմից՝ լուրջ զարգացումների ֆոնին: Նախարարները կքննարկեն երկրում տիրող ընդհանուր իրավիճակը եւ կորոշեն մեր հետագա անելիքները»,- ասաց նա:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ՍՐԲԱԶԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը գրում է. «Ադրբեջանի Ազգային Ժողովում ակտիվ քննարկում են Բագրատ Սրբազանի գործունեությունն ու Հայաստանում ընթացող զարգացումները:

Արդեն ոչ զարմանալի զուգադիպությամբ բառ-բառ կրկնվում են ՔՊ-ական պատգամավորների եւ ադրբեջանցի պատգամավորների խոսույթները: Այսպես, իշխող «Յենի Ազերբայջան» կուսակցության պատգամավոր Ջեյհուն Մամեդովը հայտարարել է. «Պատմության ընթացքում ադրբեջանցիներին ու հայերին խաղաղ ապրելու հարցում հիմնական խոչընդոտող կառույցներից մեկը հայկական եկեղեցին է: Այդ քաղաքականությունը շարունակվում է նաեւ հիմա: Բայց ի՞նչ է առաջարկում լավ Բագրատը հայ հասարակությանը: Խաղաղության այլընտրանքը պատերազմն է: Պատրա՞ստ են արդյոք հայոց պետությունն ու հասարակությունը պատերազմի: Ես կարծում եմ, որ հայ ժողովուրդը պետք է իր տեղը ցույց տա այս կեղծ քահանային եւ նրա թիկունքում վախկոտորեն թաքնված հին ռեժիմի մնացորդներին»:

Մեկ այլ պատգամավոր Թուրալ Գյանջալիեւն էլ, ով հայտնի է իր հակահայկական գրառումներով նշել է. «Հայ քաղաքական վերնախավը պետք է ազատվի սփյուռքի եւ եկեղեցու մանիպուլյացիաներից եւ վերջապես սկսի ապրել հարեւանների հետ: Այս դեպքում դա կխանգարի Ֆրանսիային եկեղեցու միջոցով հայ ժողովրդին ներքաշել ռեւանշիզմի մեջ»:

Իր հերթին, Ադրբեջանի ԱԺ նախագահ Սահիբա Գաֆարովան կոչ է արել ակտիվորեն միջամտել Հայաստանի ներքին գործերին ու փաստացի աջակցել Նիկոլ Փաշինյանին: «Լեզուն իմացող պատգամավորները պետք է ակտիվ լինեն սոցիալական ցանցերում եւ տարբեր լրատվամիջոցներում՝ օգտագործելով իրենց իմացած լեզուները, եւ պետք է ուշադրություն հրավիրեն այս իրողությունների վրա»,-ասել է Ադրբեջանի ԱԺ խոսնակը:

Ադրբեջանը ակնհայտորեն եւ մեծ խանդառավությամբ միջամտում է ՀՀ ներքին գործերին՝ «լեգիտիմ» Փաշինյանին բոլոր ընդդիմադիրներից պաշտպանելու մոլուցքով տարված: Միայն Փաշինյանը կարող էր օգնել մեր պետությունը «Արեւմտյան Ադրբեջան» կոչող, 120 հազար էթնիկ զտում ու բռնի տեղահանություն անող բռնապետին հանդես գալ որպես «խաղաղության աղավնի»: Ավելի լավ գործընկեր Ալիեւը դժվար էլ գտնի, դրա համար ամեն գնով պատրաստ է պահել նրան, չէ՞ որ հենց Փաշինյանն է Ալիեւի երազանքների ցուցակը իրագործողը՝ «ասեք՝ կանենք» կարգախոսով»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ»-Ի ԱՌԹԻՎ



«Սիրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում եմ ձեզ դպրոցական կրթությունն ամբողջացնելու եւ ավարտելու կապակցությամբ եւ մաղթում եմ՝ այն գիտելիքներն ու հմտությունները, որ դուք ստացել եք ուսումնական ողջ շրջանում, կարողանաք կյանքում ներդնել ոչ միայն ձեր անձնական, այլ մեր ընդհանրական կյանքին:

Ինչպես միշտ ասել ու շեշտել եմ՝ մեր իղձերը եւ երազանքները ավելի մեծ են, քան մեր ապրած տարիները:

Ես մաղթում եմ եւ հորդորում, որ ընթանաք ձեր իղձերի եւ երազանքների հետեւից, ընթանաք սիրո ճանապարհով, ճշմարտության ճանապարհով, արդարության ճանապարհով, ձեր մտքից երբեք չհեռացնեք Հայրենիքին եւ Աստծուն ծառայելու մեծ կոչումը, որ ունի յուրաքանչյուր մարդ:

Դուք մեր պետության, Հայրենիքի արժանավոր քաղաքացիներն եք, նվիրյալ անձինք, ովքեր պատանեկան շրջանից անցում են կատարում դեպի հասունության շրջան՝ նոր մարտահրավերներով եւ նոր փորձություններով լեցուն:

Աղոթում եմ, որպեսզի կարողանաք ոչ թե շրջանցել այդ մարտահրավերները եւ փորձությունները, այլ հաղթահարեք այն: Հաղթահարեք՝ միայն եւ միայն ճշմարտությունը եւ արդարությունը ձեր սրտում եւ ձեր մտքում ունենալով:

Աստված օրհնի եւ զորացնի ձեզ, դառնաք մեր երկրի, մեր պետության կրողները ձեր կյանքում եւ այն ներկայացնողներն աշխարհում»,- ասվում է ուղերձում:

«ԽԱԽՏՈՒՄ Է ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ». ԹԱԹՈՅԱՆ

Անվտանգությունը չի կարող տարանջատվել մարդկանցից եւ նրանց իրավունքներից. Հ-ի իր էջում գրել է ՀՀ Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը՝ կից տեսանյութ հրապարակելով, թե ինչպես են Կիրանցի բնակիչները քանդում իրենց գույքը, որը պետք է անցնի Անդրբեջանին:

«Սահմանազատումն ինքնին ապահով կյանքի համար է: Այն, ինչ կատարվում է Տավուշում՝ սահմանազատում չէ, կոպտորեն խախտում է Կիրանցի եւ մյուս գյուղերի բնակիչների իրավունքները: Չի կարելի թույլ տալ, որ ադրբեջանական հանցագործությունները թաքցվեն աշխարհից»,- գրել է նա:

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

Ասկերանի քաղաքապետի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը:

Այդ մասին հայտնում են նրա պաշտպաններ Վահե Եփրիկյանը եւ Արամ Վարդեւանյանը:

«Դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ. Մարիկյանի, քննիչի միջնորդությունը բավարարեց մասնակի՝ մեր պաշտպանյալի՝ Ասկերանի քաղաքապետ Հայկ Շամիրյանի նկատմամբ կիրառելով որպես խափանման միջոց միայն տնային կալանքը»,- նշել են նրանք:

Ասկերանի քաղաքապետն իբր 5 մլն դրամի վնաս է հասցրել Արցախին:

ՇԱՐԺԸՆԹԱՑ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեն ամփոփել է 2024թ. ապրիլի 20-ից Տավուշի մարզում, ինչպես նաեւ հանրապետության այլ բնակավայրերում իրականացվող բողոքի ակցիաների ընթացքում կատարված առերեւույթ հանցավոր դրսեւորումների առնչությամբ նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր շարժընթացը:

Ըստ այդմ՝ նշված ժամանակահատվածում բողոքի ակցիայի մասնակից քաղաքացիների կողմից կատարված առերեւույթ հանցավոր դրսեւորումների առթիվ ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում նախաձեռնվել է ընդհանուր 30 քրեական վարույթ: Դրանք նախաձեռնվել են Տավուշի մարզում, Երեւան քաղաքում եւ մյուս մարզերում ավտոճանապարհները փակելու ընթացքում կատարված առերեւույթ խուլիգանական արարքների, դրանց ընթացքում գույքերի դիտավորյալ վնասման, ֆիզիկական ներգործության, ոստիկանության աշխատակցի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու, ավտոմեքենաներով ճանապարհները փակելու, անվադողեր հրկիզելով երթեւեկությունը խաթարելու, ինչպես նաեւ՝ ապօրինի սառը զենք կրելու, հավաքներին մասնակցելու նպատակով քաղաքացիներին շահագրգռելու, լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու, այլոց նկատմամբ բռնություն գործադրելու, ցույցերին հրազենով մասնակցելու հրապարակային կոչեր հնչեցնելու, բռնություն գործադրելու միջոցով իշխանությունը յուրացնելու նախապատրաստության, ակցիայի մասնակիցների կողմից ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ այլ դեպքերին:

Նշված վարույթների շրջանակներում հանրային քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 25 անձի նկատմամբ: Նրանցից՝

• 12 անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (խմբի կազմում խուլիգանություն կատարելը),

• 2 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված, կամ հարմարեցված առարկայի, կամ միջոցի գործադրմամբ, կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված խուլիգանությունը),

• 2 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը բռնության գործադրմամբ միջամտելը),

• 2 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը):

• 2 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով (հավաքին մասնակցելուն հարկադրելն անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով, ինչպես նաեւ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը),

• 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը),

• 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (խուլիգանություն, որը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով),

• 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը),

• 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելը),

• 1 անձի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 43-419-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանությունը յուրացնելու փորձ):

Հանրային քրեական հետապնդման ենթարկվող անձանցից 10-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 4-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 7 անձի նկատմամբ՝բացակայելու արգելքը, 1-ի նկատմամբ՝ դաստիարակչական հսկողությունը: 2 անձի վերաբերյալ կայացվել է ձերբակալման որոշում եւ հանձնարարվել է նրանց ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Քրեական վարույթներից 29-ով նախաքննությունը շարունակվում է, իսկ 1 վարույթ 1 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ծանուցում.Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆՎԵԼ

Իրավապահները նախաքննության ավարտ են հայտարարում եւ դատարան են ուղարկում բոլոր այն անձանց գործերը, որոնք հրաժարվել են ծառայել բանակում:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էրիկ Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 29.02.2020թվականին կցագրվել է ՀՀ ՊՆ Ջ եւ ՋՀԾ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանման զորակոչային բաժանմունքում եւ պարտավոր է եղել ներկայանալ 2022 թվականի ձմեռային զորակոչին, սակայն խախտելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները, զինվորական ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության պայմաններում չի ներկայացել տարածքային ստորաբաժանում՝ խուսափելով ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2022թ. ձմեռային զորակոչից:

Գուրգեն Ալաբիլիկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 19.02.2014թվականին ՀՀ ՊՆ Ջ եւ ՋՀԾ Արարատի մարզի տարածքային ստորաբաժանումում կանգնել է զինվորական հաշվառման, ենթարկվել բուժհետազոտման եւ 16.12.2016թվականին ստացել է տարկետում զինվորական ծառայության զորակոչից 10 ամիս ժամանակով, իսկ 18.01.2018թվականին կրկին ստացել է տարկետում 5 ամիս ժամանակով: Այնուհետեւ 18.01.2024թվականին ԿԲՀ-ի կողմից ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար եւ ենթակա է եղել զորակոչման 2023թվականի ձմեռային զորակոչին, սակայն խախտելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները՝ վերոնշյալ զորակոչին չի ներկայացել Արարատի մարզի տարածքային ստորաբաժանում, որպիսի պայմաններում խուսափել է հայտարարված 2023 թվականի ձմեռային հերթական պարտագիր զինվորական ծառայության զորակոչից՝ այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱ Է ՏՈՒԺԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մայիսի 23-ին «Պարմա» սուպերմարկետի մոտ ահազանգ է հնչել, որ 14 տարեկան երեխա է արնահոսել, որից հետո զանգահարել է անցորդ եւ հայտնել, որ Կողբացու փ. հետույքի շրջանում դանակահարված երեխա կա:

Արդյունքում, ավելի ուշ իրավապահները պարզել են, որ ժ.01.30-ին Տերյան փողոցի շենքերից մեկի բակում 15 տարեկան անչափահաս Ա.Խ-ի /, 16 տարեկան անչափահաս Ս.Մ-ի անչափահաս Ա.Պ-միջեւ տեղի է ունեցել վիճաբանություն, որի ժամանակ կոպիտ կերպով խախտվել է հասարակական կարգը, Ս.Մ-ն իր մոտ եղած դանակով սպառնացել է Ա.Խ-ին, իսկ Ա.Պ-ն մեկ անգամ հարվածել է՝ պատճառելով վնասվածք:

Մեզ հայտնի դարձավ, որ իրավապահները ձեռնարկում են միջոցառումներ՝ Ս.Մ-ին եւ հանցագործության գործիքը հայտնաբերելու ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 23-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 121 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԻ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցապնդում ենք արել՝ 2023 թվականի ընթացքում եւ 2024 թվականի ընթացիկ ժամանակաշրջանում որպես մարզպետ Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքներում քաղաքացիների քանի՞ ընդունելություն եք կատարել, նշեք այդ ընդունելությունների օրերը, վայրը, ընդունելության եկած քաղաքացիների թիվը: Մարզպետը խուսափել է հարցին ըստ էության պատասխանելուց, մանիպուլյացիա է արել, հայտնելով. «ՀՀ Տավուշի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելություն տեղի է ունենում յուրաքանչյուր ամիս, սակայն բացի պաշտոնական ընդունելությունը, գրեթե ամենօրյա ռեժիմով ՀՀ Տավուշի մարզպետն ընդունում է քաղաքացիներ, ինչպես նաեւ մարզպետը եւ նրա օգնականներն ու խորհրդականները պարբերաբար լինում են մարզի տարբեր բնակավայրերում, լսում քաղաքացիներին եւ ընթացք են տալիս նրանց խնդիրների լուծմանը համապատասխան հանձնարարականներով: Պաշտոնական ընդունելություններին 2023 թվականի ընթացքում եկել է 155 մարդ, իսկ 2024 թվականի հունվարից մինչեւ ապրիլ ամիսը ներառյալ՝ 58 մարդ, որոնց մի մասը եղել են Բերդ, Դիլիջան ու Նոյեմբերյան համայնքների բնակիչներ»:

«ՍՈՎԵՏՆԵՐԻ, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ...» ՓՈՂՈՑՆԵՐ

Մայիսի 22-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշում է ընդունել Դիլիջան քաղաքի Սովետների փողոց թիվ 4 հասցեի 0.113հա եւ Խորհուրդների փողոց թիվ 11 հասցեի 0.0074հա հողամասերի միավորման արդյունքում առաջացած 0.1204հա հողամասը եւ բնակելի տունը հասցեակոչել Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան քաղաք, Խորհուրդների փողոց, թիվ 4 հասցեով: Բացի Սովետների, Խորհուրդների փողոցներից Դիլիջանում փողոցներ կան մանկապիղծ բոլշեւիկ ղեկավար Կալինինի, ահաբեկիչ Կամոյի անուններով:

10 ԾԱՌ ԵՆ ՀԱՏԵԼ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում շուրջ երկուսուկես տարի շարունակվում է Վլադիմիր Չատյանի եւ Ալեքսան Աֆյանի դատավարությունը: Վ. Չատյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ապօրինի ծառահատում կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով, Դիլիջան համայնքի Հովք բնակավայրի բնակիչ Ալեքսան Աֆյանի հետ, 2021թ. հունվարի 4-ին բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող « Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքից ապօրինի հատել է 9 հատ բոխի եւ մեկ հատ կաղնի տեսակի թաց կանգուն ծառեր, պետությանը պատճառելով 712 500 դրամի վնաս: Վ. Չատյանին եւ Ա. Աֆյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 296 հոդվածի 3-րդ մասով, նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ

ԿԱՅԱՆ-ԲՆԱԿԱՏԵՂԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

«Հայաստանի վաղ պատմական փուլի հնագիտական հետազոտություն» ծրագիրն իրականացվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ Ճապոնիայի Տոկայի համալսարանի միջեւ 2017թ. սեպտեմբերի 1-ին կնքված համաձայնագրով: Ծրագրի համադեկավարներն են գիտաշխատող Արթուր Պետրոսյանը եւ Տոկայի համալսարանի պրոֆեսոր Մ. Արիմուրան: Աշխատանքներն իրականացվում են Ճապոնիայի Կրթության, մշակույթի, սպորտի եւ գիտության նախարարությանը կից Գիտության զարգացման ճապոնական ֆոնդի (JSPS KAKENHI Fostering Joint International Research), ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ «Արենի-1 քարայր» կոնսորցիումի ֆինանսավորմամբ:

Արմավիրի մարզի Լեռնագոգ-1 հնավայրի հետազոտությունները ցույց են տվել, որ Ք.ա. VIII-VII հազարամյակների սահմանին այստեղ ապրել է մի համայնք, որի բնակիչները տիրապետել են վաղ անասնապահությանը եւ կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային: Սա ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ տարածաշրջանում հայտնի վաղ անասնապահների առաջին կայան-բնակատեղիներից է: Այս իմաստով Լեռնագոգ-1-ի պեղումներն ունեն կարեւորագույն նշանակություն հին աշխարհում առաջին նստակյաց համայնքների հետազոտության գործում:

«Հայաստանի նեոլիթացման գործընթացի ամենակարեւոր խնդիրը լեռնային գոտիներից հայտնի վաղհոլոցենյան հնավայրերի եւ Արարատյան դաշտի բնակատեղիների միջեւ փոխհարաբերությունն է: Պետք է նշել, որ ժամանակագրական տեսանկյունից գոյություն ունի որոշակի ժամանակագրական բաց այս երկու խմբի հնավայրերի միջեւ: Հայաստանի վաղհոլոցենյան փուլի համար բազային հնավայրերից մեկի՝ Ափնագյուղ 8 (Քմլո - 2) քարայրի համար ստացված ռադիոածխածնային տվյալները ցույց են տալիս Ք.ա. 11 - 8-րդ հազարամյակների սահմանը: Հնավայրի համար ստացված ամենաերիտասարդ տարեթիվը Ք.ա. 7400 է: Այս տարեթվի եւ Արարատյան դաշտի նեոլիթյան բլուր-բնակատեղիներից ստացված տարեթվերի միջեւ, որոնք թվագրվում են Ք.ա. 6-րդ հազարամյակով, գոյություն ունի 1,000 տարվա ժամանակագրական դադար: Լեռնագոգ-1 հնավայրում իրականացվող համապարփակ ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու այն մշակութային գործընթացները, որոնք հանգեցրին Հայաստանում նեոլիթյան համայնքների առաջացմանը», - ասաց գիտական խմբի ղեկավար, գիտաշխատող Արթուր Պետրոսյանը:

Հնագետները պարզել են, որ Լեռնագոգում ապրել է մի համայնք, որը տիրապետել է կավաշաղախից շինություններ կառուցելու տեխնիկային, հանգամանք, որը գալիս է լրացնելու եւ փոխելու տարածաշրջանի նեոլիթ-էնեոլիթյան շրջափուլի մշակույթների մասին առկա պատկերացումները եւ արտադրող հասարակությունների պատմությունը կարող է հետ տանել առնվազն հազար տարով: «Ուսումնասիրության նախնական արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ մենք ժամանակակից Հայաստանի տարածքում փաստագրել ենք միջուկային գոտիներին բնորոշ պարամետրերով առաջին կայան-բնակատեղիներից մեկը, որի տարիքը հաստատվում է բազմաթիվ ռադիոկարբոնային տվյալներով», - ասաց Արթուր Պետրոսյանը:

ԼՈՒՐԵՐ

«VivaTech-2024»-ում ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ հայրենական 10 ընկերություններ «ՀԱՅԱՍՏԱՆ» (ARMENIA) միասնական տաղավարի ներքո մայիսի 22-24-ը Փարիզում մասնակցում են Եվրոպայի ամենախոշոր տեխնոլոգիական միջոցառումներից մեկին՝ «VivaTech-2024» 8-րդ ամենամյա միջազգային ցուցահանդեսին:

Նախարարությունը, կարեւորելով հայկական տեխնոլոգիական ներուժի միջազգային ներկայացվածությունը, այս տարի եւս հնարավորություն է ընձեռել ոլորտային ընկերություններին միասնական տաղավարով ցուցադրել իրենց նորարարական լուծումները, արտադրանքն ու նվաճումները միջոցառման այցելուներին եւ մասնակիցներին:

Ամենամյա հեղինակավոր միջազգային հարթակում Հայաստանի տեխնոլոգիական ներուժն ու նվաճումներն արհեստական բանականության, կիբեռանվտանգության, ռոբոտաշինության, ֆինանսական եւ սպորտային տեխնոլոգիաների ոլորտներում այս տարի ներկայացնում են ԱՏԶՄ-ն, «Մետրիկ», «Իզիթեք», «Սոֆթ Կոնստրակտ», «Վիթուվի», «ֆայվԲրէյն Լաբս», «Հեքս Դիվիժն», «Դիջի Սոֆթ», «Նեքստստեք», «Ադեվից» ընկերությունները եւ որպես այցելու՝ «Ինորեյն»-ը, «Արփինետ»-ը եւ «Ջլինկ» գիտակրթական ՀԿ-ն:

ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ մայիսի 27-ին կմեկնարկի Հայ ժամանակակից երաժշտության 8-րդ փառատոնի առաջին համերգաշարը:

Փառատոնի նպատակն է երաժշտասեր հանրությանը ներկայացնել հայ ժամանակակից կոմպոզիտորների նոր ստեղծագործությունները, ինչպես նաեւ հայ կոմպոզիտորական արվեստի հանրահռչակումը:

Փառատոնի առաջին համերգաշարը բաղկացած կլինի երեք համերգից, որոնցից առաջինը տեղի կունենա Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահում: Համերգային երեկոյի ընթացքում կհնչեն կոմպոզիտորների միության 9 անդամի՝ Մարտուն Իսրայելյանի, Էդուարդ Հայրապետյանի, Արթուր Միտինյանի, Տիգրան Համբարյանի, Նարիրա Դիվանյանի, Նարինե Զարիֆյանի, Աննա Գարսոյանի, Գայանե Կեսոյանի, Զոհրապ Փարեմուզյանի կամերային ստեղծագործությունները, որոնցից մեծ մասը երաժշտասեր հանրությանը կներկայացվի առաջին անգամ:

Համերգաշարի երկրորդ համերգը կկայանա հունիսի 4-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը. այն նվիրվում է ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Գեղունի Չթչյանի 95-ամյակին: Կհնչեն Մարտին Ուլիխանյանի, Արսեն Հարությունի, Իրինա Խաչատրյանի, Աշոտ Ղազարյանի, Ժիրայր Շահրիմանյանի եւ Գեղունի Չթչյանի ստեղծագործությունները՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբի կատարմամբ (դիրիժոր՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Ասատրյան):

Համերգաշարի երրորդ համերգը նվիրված կլինի ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աշոտ Զոհրաբյանի հիշատակին: Հունիսի 17-ին Հայաստանի կոմպոզիտորների միության համերգասրահում երկու բաժնից բաղկացած համերգի առաջին բաժնում կհնչեն Աշոտ Զոհրաբյանի, իսկ երկրորդ բաժնում՝ նրա ստեղծագործական դասարանում ուսանած կոմպոզիտորների՝ Դավիթ Բալասանյանի, Վահրամ Սարգսյանի, Աննա Հակոբջանյանի, Հովիկ Սարդարյանի, Գոռ Իսպիրյանի ստեղծագործությունները: Կհնչեն նաեւ կոմպոզիտորին նվիրված ստեղծագործություններ, որոնք հեղինակել են Տիգրան Մանսուրյանն ու Արթուր Ավանեսովը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 26 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՐԱՎ ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

«Ֆասթ բանկը» ներկայացնում է նորույթ ֆինանսաբանկային ոլորտում՝ Temp անգրավ բիզնես վարկ: Առաջարկը նախատեսված է առեւտրի, արտադրության եւ սպասարկման ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի համար:

Temp-ը, ի տարբերություն բանկի մյուս բիզնես վարկերի, տրամադրվում է առանց բիզնեսի վայր այցելության՝ հաճախորդի կողմից իր բիզնեսի պրոֆիլին համապատասխան օնլայն հարցաշարի լրացման արդյունքների հիման վրա: Ընգծենք, որ բիզնեսի բոլոր տեսակների եւ ենթատեսակների համար առկա են իրենց գործունեությանը համապատասխանող հարցաշարեր, որոնք ձեռնարկատերերին օգնում են նաեւ ավելի լավ ճանաչել սեփական բիզնեսը: Հաճախորդի կողմից հարցաշարի լրացման ընթացքը տեւում է ընդամենը 20 րոպե, որից հետո վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է հաշված րոպեների ընթացքում:

Temp-ի դեպքում «Ֆասթն» առաջարկում է 2,000,000 - 10,000,000 ՀՀ դրամ կամ 5,000 - 25,000 ԱՄՆ դոլար գումար, որը հաճախորդը կարող է մարել 12-60 ամսվա ընթացքում: Վարկը տրամադրվում է հետեւյալ պայմաններով՝

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/՝ 17% ՀՀ դրամի դեպքում, 14% ԱՄՆ դոլարի դեպքում

Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 18.40-18.44% ՀՀ դրամի դեպքում, 14.94-14.97% ԱՄՆ դոլարի դեպքում

Վարկի ժամկետը՝ 12-60 ամիս

Վարկը տրամադրվում է մեկ անձի երաշխավորությամբ

«Temp-ի միջոցով բիզնես հաճախորդներին հնարավորություն ենք տալիս ֆինանսավորվել պարզ ընթացակարգով՝ առանց հավելյալ փաստաթղթեր ներկայացնելու, առանց բիզնեսի վայրի այցելության եւ գրավադրման պահանջի: Այդպիսով գործարարը խնայում է թե՛ ժամանակը, թե՛ միջոցները եւ կարճ ժամանակում ստանում է հաստատված վարկը: Նշեմ նաեւ, որ հայկական շուկայում այս ձեւաչափով վարկի տրամադրումը եզակի պրակտիկա է: Temp-ի արագ եւ պարզ գործընթացների շնորհիվ ձգտում ենք խթանել տեղական բիզնեսի արագ զարգացումն ու նոր հնարավորություններ առաջարկել գործարարներին», - նշել է «Ֆասթ բանկի» Կորպորատիվ բիզնեսի ծառայության ղեկավար Հայկ Գասպարյանը:

164 ՄԼՆ ԴՐԱՄԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը 164 մլն դրամի աջակցություն է տրամադրել Արցախից բռնի տեղահանված քաղաքացիներին:

Ընկերությունը կենցաղային տեխնիկա եւ կահույք է տրամադրել Քաջարան խոշորացված համայնքի Գեղի, Բարիկավան, Նոր Աստղաբերդ, Քաջարանց, Լեռնաձոր գյուղական բնակավայրերում հաստատված արցախցիներին:

«ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ»

ԱՊԱԳԱ ՆՈՐԱՐԱՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ Է

Ռազմավարական բիզնես էֆյուեր, անգնահատելի փորձ, նորարարական մոտեցումներ ու 25-ից ավելի միջոցառում է սպասվում CaseKey բիզնես խնդիրների լուծման մրցույթ 2024-ին, որի գլխավոր հովանավորն արդեն երկրորդ տարին անընդմեջ Բիբլոս Բանկ Արմենիան է:

Մրցույթի պաշտոնական բացումը տեղի ունեցավ մայիսի 21-ին: Առաջիկա 6 ամսվա ընթացքում մասնակիցները կլուծեն 4 բիզնես քեյս, կունենան ակտիվ թրեյնինգային օրեր քոուչների հետ, կմրցեն իրար հետ ինտելեկտուալ մրցաշարի շրջանակում ու ոչ ֆորմալ հանդիպումներ կունենան տարբեր ոլորտների առաջատար մասնագետների հետ:

Այս տարի մրցույթին մասնակցելու հնարավորություն է ստացել 263 խելացի երիտասարդ եւ քոուչ, որոնք կկազմեն 24 թիմ, ներառյալ՝ 6-ը մարզերից: Ռեկորդային թվով հայտերից դիմորդների միայն լավագույն 35%-ն է միացել նախագծին:

Միջոցառման բացմանը մասնակիցներին մոտիվացիոն ելույթով ողջունեց Բիբլոս Բանկ Արմենիայի գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Ստեփանյանը, որը ներկաներին խորհուրդ տվեց կրթությանը վերաբերվել որպես երկարաժամկետ ներդրման:

«Իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի միջոցով Բիբլոս Բանկ Արմենիան ձգտում է օգնել երիտասարդներին կառուցել իրենց ապագան Հայաստանում, եւ այդ պատճառով էլ արդեն երկրորդ տարին անընդմեջ Բանկը ֆինանսավորում է CaseKey մրցույթը: Մենք սա համարում ենք արդարացված ներդրում՝ որպես նորարարությանը մեր հանձնառության կարեւոր մաս: Անցյալ տարի տարբեր առիթներով շփում ունեցա երիտասարդների հետ եւ պիտի առանձնացնեմ նրանց հետաքրքրասիրությունն ու սովորելու մեծ ցանկությունը: Ուրախ ենք տեսնել, որ մրցույթին այս տարի միացել են ռեկորդային թվով ուսանողներ մարզերից: CaseKey-ի հաջողության մեջ կարեւորագույն գործոն է թիմային աշխատանքը, ինչը նաեւ մեր Բանկի արժեքներից է: Վստահ եմ՝ այս տարի նույնպես լավ արդյունքներ կգրանցենք, իսկ Բիբլոս Բանկ Արմենիան, ինչպես միշտ, կաջակցի մասնակիցների կարողությունների զարգացմանը»,- ասաց Հայկ Ստեփանյանը:

CaseKey բիզնես խնդիրների լուծման մրցույթի հիմնադիր նախագահ Արշակ Կարապետյանն անդրադարձավ CaseKey միջազգային թիմի հաջողություններին:

«Մենք հավատարիմ ենք մեր ուսանողներին հարուստ փորձ տրամադրելուն եւ վստահ ենք, որ այս տարվա միջոցառումը կգերազանցի սպասելիքները: Մենք երախտապարտ ենք մեր հովանավորներին եւ գործընկերներին, որոնք մեծ դեր են ունեցել այս միջոցառումը հնարավոր դարձնելու գործում: Մասնավորապես, ցանկանում ենք մեր սրտագին շնորհակալությունը հայտնել Բիբլոս Բանկ Արմենիային: Նրանց անսասան աջակցությունն արդեն երկրորդ տարին անընդմեջ մեզ հնարավորություն է տալիս հայ ուսանողներին մատուցել բարձրորակ կրթություն եւ իրական բիզնես փորձառություն: Մենք միասին կերտում ենք կրթության ապագան եւ հնարավորություններ ստեղծում հաջորդ սերնդի առաջնորդների համար»,- նշեց Արշակ Կարապետյանը:

Մշտապես կարեւորելով իմաստավորված ու դրական քայլերը՝ Բիբլոս Բանկ Արմենիան շարունակ ներդրում է կատարում առողջ, բարգավաճող համայնքներ կառուցելու գործում՝ իրականացնելով մի շարք ԿՍՊ ծրագրեր եւ կրթական նախագծեր:

Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շարքում CaseKey մրցույթը յուրահատուկ կարեւորություն ունի որպես գործնական գիտելիքներ սովորեցնող հարթակ:

ԼՈՒՐԵՐ

One Run – First Run ԿԻՍԱՄԱՐԱԹՈՆ

Օրերս Երեւանում արդեն երկրորդ անգամ անցկացվել է Հերոսների լիգայի «One Run - First Run» միջազգային խոշորագույն կիսամարաթոնը: Հայաստանյան մարաթոնի տիտղոսային հովանավորը Fastex-ն էր: Կիսամարաթոնն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

Մրցավազքը մեկնարկել է Հանրապետության հրապարակից՝ ներառելով քաղաքի կենտրոնական փողոցները: Կիսամարաթոնին մասնակցել է ավելի քան 1000 մարդ: Հիշեցնենք, որ մրցավազքին կարող էր մասնակցել 6 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձ: Մասնակիցները պետք է հաղթահարեին մի քանի մրցատարածություններ՝ 1, 5, 10 կամ 21,1 կմ երկարությամբ:

Հատկանշական է, որ հենց նույն օրն ավելի քան 160,000 անձ միացել է «One Run» կիսամարաթոնի մեկնարկին՝ Ռուսաստանի բոլոր մարզերում, իսկ շուրջ 15 երկրից մարթոնին է միացել ավելի քան 30,000 վազորդ:

Fastex-ը, կարեւորելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը, շարունակելու է աջակցել Հայաստանում սպորտի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exčhange փոխանակման հարթակը, Fastex Pay կրիպտո վճարային միջոցը, Fastexverse վիրտուալ 3D իրականությունը եւ ftNFT հարթակը՝ իր ֆիջիթալ տարածքներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը բոլոր օգտատերերի համար համաշխարհային թվային ֆինանսների զարգացող ոլորտում՝ մշտապես հետեւելով առկա կանոնակարգերին:

ՄՈՍԿՎԱ–ԵՐԵՎԱՆ ՉՎԵՐԹՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել՝ ինչ արժեն Մոսկվա-Երեւան առանց ուղեբեռ չվերթները մայիսի 24-ից 27-ը ընկած ժամանակահատվածում:

Այսպիսով՝ մայիսի 24-ին Aviakassa-ում տոմսի արժեքը 71.250 դրամ է: Թռիչքի տեւողությունը 8 ժամ 10 րոպե, իսկ 3 ժամ 15 րոպե ուղիղը թռիչքը արժե 75.750 դրամ:

Նույն Aviakassa ընկերությունում 22 ժամ 45 րոպե ոչ ուղիղ չվերթը 97.110 դրամ է:

Արժեքային կտրուկ փոփոխություն է նկատվում 8 ժամ 45 րոպե թռիչքի ժամանակ 115.650 դրամ, որի վայրէջքի ժամը 00:00-ին է:

Մայիսի 25-ին FlyOne ընկերությունում 3 ժամ 20 րոպե ուղիղ թիչքի արժեքը 62.140 դրամ է:

Aviakassa-ում տոմսի արժեքը 62.170 դրամ է, 22 ժամ 5 րոպե տեւողությամբ:

Մայիսի 26-ին Aviakassa ընկերության միջոցով 22 ժամ 45 րոպե թռիչքը կարժենա 54.040 դրամ:

FlyOne-ում 3 ժամ 20 րոպե ուղիղ թռիչքը 62.140 դրամ է:

Մայիսի 27-ին City.Travel ընկերությունում 19 ժամ 50 րոպե թռիչի արժեքը 50.470 դրամ է:

Aviakassa ընկերությունը առաջարկում է 53.110 դրամ արժողությամբ ավիատոմս, որի թռիչքի տեւողությունը 15 ժամ 10 րոպե է:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԱՐԱ ՄԱԼԻԿՅԱՆԸ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Լիբանանահայ ջութակահար Արա Մալիկյանը, որի վիրտուոզ կատարումներն անտարբեր չեն թողնում ոչ ոքի, «ԹԻ ԷՄ փրոդակշն»-ի հրավերով համերգային ծրագրով կվերադառնա Երեւան:

Համերգային երեկոն տեղի կունենա հունիսի 3-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Մալիկյանի հետ բեմում կլինեն երաժիշտներ, որոնց հետ ջութակահարը երկար ճանապարհ է անցել, հանդես եկել աշխարհի հեղինակավոր բեմերում: Նրանք են դաշնակահար Իվան «Մելոն» Լյուիսը, կոնտրաբասահար Իվան Ռուիս Մաչադոն, թմբկահար Գեորվիս Պիկո Միլանը, կիթառահար Դայան Աբադը:

Նույն երաժիշտների հետ Մալիկյանը երեւանյան բեմում ելույթ է ունեցել 2023-ի հոկտեմբերին՝ անմոռանալի հույզեր պարգեւելով հանդիսատեսին:

Համացանցում հրապարակված տեսանյութում Արա Մալիկյանն ասում է՝ շատ ուրախ է, հուզված, որ վերադառնում է իր սիրելի Երեւան՝ տեսնելու սիրելի ընկերներին, սիրելի երեւանցիներին:

Ավելի վաղ խոսելով «The Ara Malikian World Tour»-ի մասին, որի շրջանակում իրականացվում է երեւանյան համերգը՝ ջութակահարը նշել է. «Երբ տեսա, թե ինչպես է որդիս ամիսներ շարունակ տեւած անկումներից, անհաջող փորձերից եւ ճիգերից հետո իր առաջին քայլերն անում, հասկացա, որ բոլորս էլ ժամանակին ունեցել ենք այդ ուժը, որ հետզհետե մոռացվել է: Երեխաները քնքուշ են, չեն վախենում սխալվելուց, ազատ են ու արտահայտվող: Երբ նայում ես մանկանը, հասկանում ես՝ ով ես եղել, թե որքան երկար ժամանակ է, որ քեզ զրկել ես այդպիսին լինելուց: Այս շրջագայությունը ծնվել է իմ դիտարկումների արդյունքում, երբ հետեւել եմ, թե ինչպես է մեծանում իմ որդին, ինչպես եմ հասակ առնում նրա հետ:

Այստեղ այն ինչյուններն ու մեղեդիներն են, որ արտահայտում են իմ զգացողությունները եւ զավակիս միջոցով ոգեշնչել են ինձ: Շրջագայությունը լի է դինոզավրերով, ռոբոտ-կաղամարներով, ժամանակի մեքենաներով, թռչող դաշնամուրներով եւ երկլեզու միմոսներով: Սա այն ալբոմն է, որը մոռացության էի մատնել, բայց որը հզոր ներգործություն ունի: Զարմանահրաշ է յուրաքանչյուր օր բացահայտել դրանց հմայքն ու գրավչությունը»:

Արա Մալիկյանը ծնվել է Լիբանանում, սակայն երկար տարիներ ապրում եւ ստեղծագործում է Իսպանիայում: Նրա տաղանդը բացահայտվել է վաղ տարիքում՝ չնայած այն հանգամանքին, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում երկար ժամանակ ստիպված է եղել ապրել եւ սովորել ռմբապաստարաններում: Մալիկյանի առաջին մեծ համերգը կայացել է 12 տարեկանում, իսկ երկու տարի անց՝ դիրիժոր Հանս Հերբերտ Յորիսի միջնորդությամբ, գերմանական կառավարության կողմից կրթաթոշակ է ստացել՝ Հանովերի երաժշտության եւ թատրոնի բարձրագույն դպրոցում սովորելու համար: Մալիկյանը շարունակել է իր կրթությունը Լոնդոնի Գիլդհոլի երաժշտության եւ դրամայի դպրոցում, ինչպես նաեւ դասեր առել աշխարհահռչակ պրոֆեսորներից: 2015-ին Մադրիդի Թագավորական թատրոնի հետ համագործակցությամբ վերաթողարկել է իր ալբոմը՝ նվիրված Իսպանիայում բնակություն հաստատելու 15- ամյակին:

Մալիկյանի վերջին տարիների խոշոր շրջագայություններից է «15»-ը, որը հանրության եւ քննադատների շրջանում մեծ հաջողություն է ունեցել՝ ավելի քան 175 հազար հանդիսական եւ ավելի քան 150 համերգ: Հաջորդ՝ «Ջութակի անհավանական պատմությունը» ալբոմով, նա համաշխարհային շրջագայության է մեկնել այն ջութակով, որով նվագել է մոլորակի խոշորագույն քաղաքների ամենահեղինակավոր բեմահարթակներում եւ թատրոններում՝ Լոնդոն, Փարիզ, Հռոմ, Մոսկվա, Բուենոս Այրես, Մեխիկո Սիթի, Լիմա, Սանտյագո դե Չիլի, Պեկին, Հոնկոնգ, Ստամբուլ, Բելգրադ, Բրատիսլավա, Մադրիդ, Լիսաբոն, Բեռլին: 2019-ին Մալիկյանի «Royal Garage» համաշխարհային շրջագայությունը մեկնարկել է համանուն ալբոմի թողարկմամբ. նա համագործակցել է այնպիսի արտիստների հետ, ինչպիսիք են Անդրես Կալամարոն, Էնրիկե Բունբերին եւ Սերժ Թանկյանը: Արա Մալիկյանի «Petit Garage» շրջագայությունն էլ համաճարակի եւ նախորդ տուրնեի արդյունք է եղել: Այն վերածվել է դաշնամուրի եւ ջութակի զգացմունքայնությամբ լի շոուների, որոնք տեղի են ունեցել սահմանափակ տարողությամբ դահլիճներում: Համերգներն անցել են մտերմիկ մթնոլորտում, հետաքրքիր հույզեր փոխանցել հանդիսականին: Այդ համերգներով Մալիկյանը ճանապարհորդել է աշխարհով մեկ՝ Դուբայի օպերայից մինչեւ Մեքսիկայի Միչոական եւ Մադրիդի թագավորական պալատ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՊՀ սպորտային մայրաքաղաք Գյումրիում այսօր մեկնարկել է ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի խորհրդի համաժողովը, որը վարել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

Համաժողովին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարի տեղակալ Ալեքսեյ Մորոզովը, Բելառուսի Հանրապետության սպորտի եւ տուրիզմի նախարարի առաջին տեղակալ Ալեքսանդր Դորոխովիչը, Ղրղզստանի մշակույթի, տեղեկատվության, սպորտի եւ երիտասարդության քաղաքականության նախարարի տեղակալ Այբեկ Աբդիմոմունովը, ԱՊՀ մշակույթի, սպորտի, զբոսաշրջության եւ երիտասարդության հարցերով խորհրդական Ալեքսանդր Դուբկովսկին, Տաջիկստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի կոմիտեի փոխնախագահ Պարվիզ Օբիրզոդան, Ղազախստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի փոխնախագահ Ազամատ Իմաշեւը, Ուզբեկստանի, Թուրքմենստանի սպորտի ոլորտը համակարգող կառույցների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Համաժողովի ընթացքում Գյումրի համայնքի ղեկավարությանն է փոխանցվել ԱՊՀ սպորտային մայրաքաղաքի հավաստման սերտիֆիկատը: Այն ստացել է Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Սանոյանը:

Այցի շրջանակում ԱՊՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի մասնակից պետությունների ներկայացուցիչները կծանոթանան նաեւ Գյումրու մարզական ենթակառուցվածքներին, կունենան մի շարք այլ հանդիպումներ:

«ԱՏԱԼԱՆՏԱՆ» ՆՎԱՃԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ԳԱՎԱԹԸ

Բերգամոյի «Ատալանտան» առաջին եվրոպական տիտղոսը նվաճեց: Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում տեղի ունեցած Եվրոպայի լիգայի եզրափակիչում իտալական թիմը մրցեց Գերմանիայի նորընծա չեմպիոն Լեւերկուզենի «Բայերի» հետ:

Առաջին խաղակեսում իտալացի Ջան Պիերո Գասպերինիի գլխավորած թիմից դուբլի հեղինակ դարձավ նիգերիացի հարձակվող Ադեմոլա Լուկմանը, որն աչքի ընկավ 12-րդ (տեսանյութ) եւ 26-րդ րոպեներին (տեսանյութ): 75-րդ րոպեին Լուկմանը նաեւ հեթ-տրիկ ձեւակերպեց (տեսանյութ):

1963թ. Իտալիայի գավաթից հետո «Ատալանտան» երկրորդ տիտղոսը նվաճեց:

Եվրոպայի լիգա, եզրափակիչ
«Ատալանտա» - «Բայեր»՝ 3:0
Ադեմոլա Լուկման, 12, 26, 75

ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱ

«ՄԱՆՅՈՒՆՅԱՆ» ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

Հայ գրող Նարինե Աբգարյանի հայտնի բեսթսելերի հերոսուհու արկածները շարունակվում են. ռեժիսոր Դենիս Գուլյարի «Մանյունյա. Արկածներ Մոսկվայում» ընտանեկան կատակերգությունը կներկայացվի հայ հանդիսատեսին: Ֆիլմը հնարավոր կլինի դիտել երեւանյան կինոթատրոններում մայիսի 30-ից: Արդեն իսկ հասանելի է կինոնկարի թրեյլերը: Նշենք, որ հատուկ մանուկների դաստիարակության օրվան ընդառաջ՝ հայ հանդիսատեսի համար ֆիլմը թարգմանվել եւ կրկնօրինակվել է հայերեն, ինչը անսովոր, բայց հաճելի անակնկալ է հատկապես փոքրիկների համար:

Ֆիլմի հերոս միշտ պայծառ Մանյունյայի եւ նրա ընկերների՝ Կարինեի եւ Նարինեի, կյանքն անդադար սլանում է առաջ եւ հիմա նրանց սպասվում է ամառային արձակուրդն անցկացնել Մոսկվայում: Աղջիկներին սպասվում են անհավատալի իրադարձություններ եւ արկածներ, ինչպես նաեւ անսպասելի հանդիպումներ եւ ծանոթություններ:

Դերերում՝ Եվգենի Պետրոսյան, Կարինա Կագրամանյան, Կարինա Մնացականյան, Ջուլիետա Ստեփանյան, Եկատերինա Տեմնովա, Սերգեյ Կանաեւ, Անդրեյ Կոնդրատեւ: Պրոդյուսերներ՝ Սարիկ Անդրեասյան, Ղեւոնդ Անդրեասյան, Գեորգի Շաբանով: Սցենարը՝ Նարինե Աբգարյանի, Հայկ Ասատրյանի, Նառա Հակոբյանի, օպերատոր՝ Տիգրան Դավթյան:

«Մեր նոր ֆիլմը նախ եւ առաջ տարբերվում է սերիալից եւ առաջին ֆիլմից նրանով, որ առաջին անգամ մենք լքում ենք Մանյունյայի ծանոթ աշխարհը: Նոր մասը շատ ավելի մասշտաբային է, մենք կարողացանք վերստեղծել 1981 թվականի Մոսկվան, դրա մթնոլորտը Օլիմպիական խաղերից անմիջապես հետո: Շատ էինք ուզում ֆիլմը լցնել ատրակցիոններով ու մեծ արվեստագետներով, որպեսզի ընդգծենք այդ տարիների Մոսկվայի մեծությունը, ցույց տանք, թե որքան դժվար, բայց ցանկալի էր մայրաքաղաքում ապրելը»,-նշում է ֆիլմի պրոդյուսեր Ղեւոնդ Անդրեասյանը:

«Մանյունյայի նկարահանումները միշտ կապել եմ Հայաստանի եւ մեր կինոարշավների հետ: Շատ անսպասելի էր իմանալ, որ նոր ֆիլմի նկարահանումները տեղի են ունենալու Մոսկվայում: Կինոդիտողին սպասվում են նոր պատմություններ, հուզիչ արկածներ եւ Եվգենի Պետրոսյանի մարմնավորած անհավանական նոր կերպարը»,-նշում է դերասանուհի Կարինա Կագրամանյանը: Հայտնի հայազգի հումորիստ Եվգենի Պետրոսյանը եւս դեր ունի այս ֆիլմում: «Իմ կարիերայի ընթացքում շատ կինոնախագծեր էին ծրագրվում, բայց ամեն անգամ ինչոր բան չէր ստացվում, եւ հիմա, վերջապես, ստացվել է: Պատմությունը, որի վրա մենք աշխատել ենք, աներեւակայելի քաղցր է, տոգորված բարությամբ եւ կարոտով: Հատկապես հաճելի է, որ իմ երեխաներն այժմ կկարողանան իրենց հայրիկին դիտել ֆիլմերում: Այնպես որ, ես ուրախ եմ, որ ամեն ինչ այսպես ստացվեց»,-նշում է դերասանը:

«Մանյունյա. Արկածներ Մոսկվայում» ընտանեկան կատակերգությունը Մանյունյայի արկածները ներկայացնող ֆիլմաշարի երկրորդ մասն է:

Առաջին ֆիլմը եւ համանուն սերիալն ունեցել են շատ մեծ հաջողություն, ուստի ստեղծագործական թիմը որոշել է շարունակել բեսթսելերի էկրանավորումը:

● *Մայիսի 28-ին՝ ժամը 21:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ազնավուր» ներկայացումը՝ նվիրված մեծ շանսոնիեին: Տոմսերի արժեքը՝ 4000, 6000, 8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Վազգեն Սաֆարյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:

Գրետա Հարությունյան (71 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային
համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայ մարմնամարզիկներ Արթուր Դավթյանը, Արթուր Ավետիսյանն ու Արթուր Թովմասյանը դուրս են եկել Բուլղարիայի Վառնա քաղաքում ընթացող World Challange Cup միջազգային մրցաշարի եզրափակիչ:

Ավետիսյանն ու Թովմասյանը մասնակցել են օղակներ վարժությանը եւ վաստակել համապատասխանաբար 14,700 եւ 13,700 միավոր:

Արթուր Դավթյանն էլ նժույգ թափեր վարժության եզրափակիչ է դուրս եկել 14,100 միավորով: Հայաստանի հավաքականից մրցավայր է մեկնել նաեւ Էրիկ Բաղդասարյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+2 + 5 +13 + 17
Լոռի	+3 + 5 +13 + 16
Տավուշ	+7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+7 + 11 +19 + 23

Արարատ	+9 + 12 +22 + 24
Արմավիր	+8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+5 + 9 +14 + 16
Երեւան	+16 + 18 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*